47.	Արտաշիսյան 50/1	էլ. համակարգի վերանորոգում, ջրի ֆիլտրի ստուգում
48.	Պուշկինի 3	էլ. համակարգի վերանորոգում, պոմպի աշխատանքի ստուգում
49.	Հանրապետության 76	էլ. համակարգի վերանորոգում, վնասված մալուխի փոխարինում
50.	Մայաթ-Նովա 15	էլ. համակարգի վերանորոգում
51.	Չեխովի 31	էլ. համակարգի վերանորոգում, ջրի ճնշումների ստուգում
52.	Արշակունյաց 30	էլ. համակարգի վերանորոգում, ջրի ճնշումների ստուգում
53.	Մանթաշյան 51	պոմպի վահանակի անսարքություն
54.	Աթոյան 12/3	ջրի ճնշումների ստուգում և կարգավորում
55.	Չեխովի 56	Բարձր ճնշման ռելեի անսարքություն
56.	Մանթաշյան 8	Ջրի ճնշումների ստուգում
57.	Արցախի 10/4	Ջրի ճնշումների ստուգում
58.	«Արտաշատ» տեղամաս	Ավտոմատ անջատիչի տեղադրում 63Ա-3հատ, ավտոմատ անջատիչ 100Ա-1հատ, հաղորդալար 2 * 2.5մմ 70գծ. մ տեղադրում, հաղորդալար 2 * 4մմ 65գծ. մ հաղորդալար 1 * 4մմ 35գծ/ մ տեղադրում
59.	Բագրատունյաց 15	Պոմպի աշխատանքի ստուգում
60.	Ամիրյան 15	Ջրի ճնշումների ստուգում
61.	Արցախի 14	Ջրի ճնշումների ստուգում
62.	Չեխովի 56	թողարկիչի անսարքության կարգավորում
63.	Մոսկովյան 28	Ջրի ճնշումների ստուգում
64.	Ալեքսանդր 1,2	էլ. մալուխի վնասված հատվածի նորոգում
65.	Իսրայելյան 37	Ջրի ճնշումների ստուգում
66.	Արցախի 6	Հետադարձ փականի նորոգում
67.	Քոչար 13	Փոխվել է 1 ջրի CR պոմպ, 1 հետադարձ փական
68.	Քոմիտաս 45/1 - 23	Փոխվել է 1 ավտոմատ անջատիչ, 1 հետադարձ փական
69.	Առաքելյան 66 - 34	1 հ բարձր ճնշման ռելե
70.	Կոմիտաս 42	Պոմպի աշխատանքի կարգավորում
71.	Ազատության 6	Պոմպի աշխատանքի կարգավորում
72.	Մունդուկյանի 15/1 - 34	Պոմպի աշխատանքի կարգավորում
73.	Մունդուկյանի 15 - 31	Պոմպի աշխատանքի կարգավորում
74.	Վրացական 4 նրբ 5/12 40	Պոմպի աշխատանքի կարգավորում
75.	Կոնդ 5 թաղ	էլ. սարքերի կարգավորում
76.	ք. Էջմիածին չարենցի 1	Պոմպի աշխատանքի կարգավորում
77.	Հակոբյանի 1 - 130	էլ. սարքերի կարգավորում

78.	Վ. Փափազյան 11շ 92	Պոմպի աշխատանքի կարգավորում
79.	Մարգարյան 7	Պոմպի աշխատանքի կարգավորում
80.	Քանաքեռ 14փ. 40շ	Պոմպի աշխատանքի կարգավորում
81.	Էստոնական 12/1 - 120	Պոմպի աշխատանքի կարգավորում
82.	Վաղարշյան 24/2շ 50	1h ցածր ճնշման ռելե, 1h ավտոմատիկայի կառավարիչ 1h եռաֆազ թողարկիչ
83.	Ադոնցի 15 - 33	Պոմպի աշխատանքի կարգավորում
84.	Մամիկոնյանց 47/1 - 51	Պոմպի աշխատանքի կարգավորում
85.	Ազատության 11/1	Պոմպի աշխատանքի կարգավորում
86.	Վրացական 4նրբ 5/1	Պոմպի աշխատանքի կարգավորում
87.	Ադոնց 1	Պոմպի աշխատանքի կարգավորում
88.	մ. Կոտայք գ.քախսի	Պոմպի աշխատանքի կարգավորում
89.	Վրացական 4նրբ 5շ-45	2h եռաֆազ թողարկիչ, 1h ավտոմատիկայի կառավարիչ
90.	Համբարձումյան 47	2h բարձր ճնշման ռելե
91.	Կոմիտասի 44 - 68	Պոմպի աշխատանքի կարգավորում
92.	Կոմիտաս 46	Պոմպի աշխատանքի կարգավորում
93.	Կոմիտաս 50	Պոմպի աշխատանքի կարգավորում
94.	Վրացական 9շ 61	Պոմպի աշխատանքի կարգավորում
95.	Բաղրամյան 1նրբ. 14շ	1h վերանորոգման հավաքածու, 1h բարձր ճնշման ռելե
96.	Էմին 80	1h բարձր ճնշման ռելե, 1h ցածր ճնշման ռելե, 1h մոնոմետր եռաֆազ թողարկիչ
97.	Հ. Քոչար 18	Պոմպի աշխատանքի կարգավորում
98.	Միլիկյան թաղ.	Պոմպի աշխատանքի կարգավորում
99.	Փափազյան 11	Պոմպի աշխատանքի կարգավորում
100.	ք. Եղվարդ	Էլ. մալուխի վերանորոգում
101.	ք. Չարենցավան 1ա թաղ. 2շ	2h առանցքակալ, 1h լիսեռ
102.	Հ. Էմինի 80 - 28	1h բաքի մեմբրան 100լ, միացման դետալների փոխարինում /պլաստիկ/
103.	Ռայնիս 105	1հատ ցածր ճնշման ռելեի փոխում, 1ավտոմատիկայի կառավարիչ
104.	Ռուբինյանց 24	1h.բարձր ճնշման ռելե, 1h եռաֆազ թողարկիչ
105.	Արաբկիր 21	Պոմպի շարժիչի վերանորոգում , 1h վերանորոգման հավաքածու, 1h բանվորական անիվ, 2h առանցքակալ, 1h լիսեռ, 1h ավտոմատ անջատիչ
106.	Կոմիտասի 7/3 - 34	Պոմպի շարժիչի վերանորոգում, 1h եռաֆազ թողարկիչ, շարունակելի
107.	Ավետ Ավետիսյանի 78 - 46	Էլ. սարքերի կարգավորում
108.	Ավետ Ավետիսյանի 76 - 41	1h ցածր ճնշման ռելե, 1h հետադարձ փական, 1h ավտոմատ անջատիչ
109.	ք. Չարենցավան 1ա թաղ. 2շ	1h բանվորական անիվ
110.	Արաբկիր 21փ	1h բանվորական անիվ
111.	Ավետ Ավետիսյանի 76 - 25	1h փականի փոխում
112.	Ավետ Ավետիսյանի 67	Պոմպի աշխատանքի կարգավորում
113.	Միլիկյան թաղ.	Պոմպի աշխատանքի կարգավորում
114.	Կոմիտաս 44շ	Պոմպի աշխատանքի կարգավորում
115.	Ռ. Մելիքյանի 2/2 - 31	2h եռաֆազ թողարկիչ, 1h ավտոմատիկայի կառավարիչ
116.	Ռ. Մելիքյանի 2/1	Պոմպի աշխատանքի կարգավորում
117.	Ռուբինյանց 24	Պոմպի աշխատանքի կարգավորում
118.	Ավետ Ավետիսյանի 67	1h բարձր ճնշման ռելե, 1h վերանորոգման հավաքածու
119.	Սեբաստիա 24	Պոմպի աշխատանքի կարգավորում
120.	Սեբաստիա 30	Պոմպի աշխատանքի կարգավորում
121.	Հ. Էմինի 6 - 46	Պոմպի աշխատանքի կարգավորում
122.	Առաքելյանի 66 - 34	1հատ մանոմետր, ավտոմատիկայի կառավարիչ և 1հատ բարձր ճնշման ռելե
123.	Ա. Տիգրանյանի 3 - 70	Պոմպի աշխատանքի կարգավորում
124.	Կոմիտասի 4 - 12	Պոմպի աշխատանքի կարգավորում
125.	Ա. Տիգրանյանի 3 - 46	Պոմպի գննում,փոխվել է 1ձկուն խողովակ, 1բարձր ճնշման ռելե
126.	Մամիկոնյանց 23/1 - 53	Փոխվել է 1եռաֆազ թողարկիչ, 1ցածր ճնշման ռելե
127.	Արաբկիր 25 փ. 2 - 29	1եռաֆազ թողարկիչ, փոխվել է 4առանցքակալ, պոմպի շարժիչի վերանորոգում
128.	Վ. Փափազյանի 11 - 44	Պոմպի գննում,2h եռաֆազ թողարկիչ
129.	Շինարարների 15/1 - 130	Էլ. սարքերի վերանորոգում
130.	Աշտարակ	Էլ. սարքերի վերանորոգում
131.	ք. Էջմիածին Զվարթնոց թաղ.	1h հետադարձ փական,2h առանցքակալ և ռետինե խողովակների միացման դետալներ,1h վերանորոգման հավաքածու
132.	Փափազյան 11շ.	Պոմպի աշխատանքի կարգավորում

133.	Կոմիտաս 19/8շ.	Պոմպի աշխատանքի կարգավորում
134.	Շինարարներ 2շ.	Պոմպի աշխատանքի կարգավորում
135.	Բաշինջաղյան 1-ին նրբ. 1շ.	Պոմպի աշխատանքի կարգավորում
136.	Կոմիտաս 42	Պոմպի աշխատանքի կարգավորում
137.	Բաֆֆու 45 - 54 (բ-1 35)	1հ հետադարձ փական,2հ եռաֆազ թողարկիչ
138.	գ. Պոռշյան	1հ ժամանակի ռելե,1հ եռաֆազ թողարկիչ
139.	Միլիկյան 7փ 90	Պոմպի աշխատանքի կարգավորում
140.	Լենինգրադյան 52	Զննում, 1հետադարձ փականի և 1բարձր ճնշման ռելեի փոխարինում
141.	Բ-1 ,թաղ 97	Պոմպի աշխատանքի կարգավորում
142.	Կոմիտաս 42	Պոմպի աշխատանքի կարգավորում
143.	Ավետ Ավետիսյանի 76 - 57	2հատ եռաֆազ թողարկիչի փոխարինում
144.	Հակոբյան 1	Պոմպի աշխատանքի կարգավորում
145.	Արաբկիր 51փող. 3շ.	Պոմպի աշխատանքի կարգավորում
146.	Շրջանային 2/4 - 35	Պոմպի գնում, 1հատ եռաֆազ թողարկիչի փոխարինում, և 1ավտոմատ անջատիչ
147.	Արաբկիր 51 փող 3 շ	Ճֆշման և էլ. սարքերի կարգավորում
148.	Վրացական 4-րդ նրբ. 7շ.	Պոմպի աշխատանքի կարգավորում
149.	Մամիկոնյանց 36/1	Պոմպի աշխատանքի կարգավորում
150.	Արաբկիր 51 փ. 3 - 88	Պոմպի աշխատանքի կարգավորում
151.	Ազատության 11/1 - 65	Պոմպի աշխատանքի կարգավորում
152.	Բաշինջաղյան 1 փ. 13 - 55	Պոմպի աշխատանքի կարգավորում
153.	Ն. Սուրենյանի 4 - 52	Պոմպի աշխատանքի կարգավորում
154.	Ծերենցի 5 - 21	Պոմպի աշխատանքի կարգավորում

1.6. Մեքենա-մեխանիզմներ

Սեպտեմբեր ամսին իրականացված վերանորոգման աշխատանքների արդյունքում կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար մի շարք մեքենա-մեխանիզմներ:

Իրականացվել են թվով 14 մեքենաների շարժիչները մասնակի նորոգում, փոխարինվել են շարժիչի հանդարտիչները, հղկվել և կարգավորվել են գլխիկները, փոխարինվել են կայծամուները և ներդիրները:

Թվով 4 մեքենաների մարտկոցները փոխարինվել են նորերով:

Թվով 7 մեքենաների հոսանքները կարգավորվել և վերանորոգվել են, փոխարինվել են կայծամուները, կայծամումի լարերը, էլ. ռելեները, վառոցքի բանալիները և մալուխները:



Թվով 2 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները,



վրանները, փաթույթները և բենդեքսները:

Թվով 10 մեքենաների արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Թվով 3 մեքենաների փոխանցման տուփերը նորոգվել են, փոխարինվել են աստամնանիվները,

առանցքակալները, խտաբուկները, ներդիրները:

Փոխարինվել են թվով 21 անվաղողեր, կատարվել է դրանց հավասարակշռում:

Վերանորոգվել են թվով 3 մեքենաների ուժեղացուցիչները, փոխարինվել են աստամնանիվները, առանցքակալները, խտաբուկները, ներդիրները:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 11 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:



Վերանորոգվել են թվով 8 մեքենաների և էքսկավատորների բարձր ճնշման խողովակները:

Վերանորոգվել են, փոխարինվել են թվով 3 մեքենաների և էքսկավատորների բարձր ճնշման մխոցները:

Կատարվել է թվով 4 մեքենաների թափքի նորոգում, ապակիների, ծածկոցի տեղադրում:

Թվով 17 մեքենաների վրա իրականացվել են կցորդման համակարգի նորոգումներ, փոխարինվել են կցորդման սկավառակները, շաղկապման մեխանիզմները, անջատող առանցքակալները և խտաբուկերը:



Իրականացվել է թվով 4 մեքենաների խլացուցիչների նորոգում և փոխարինում, կատարվել են գոդման աշխատանքներ, ռետինների, ներդիրների և խամուտների փոխարինում:

Թվով 4 մեքենաների վրա կատարվել է առջևի համակարգի նորոգում. փոխարինվել են գնդավորները, դեկի ձգաձողերը, ուղղորդիչ վռանները, մեղմիչները, անվակունդի առանցքակալները, հարվածամեղմիչի գսպակները և հարվածամեղմիչները:

Հետևի համակարգի նորոգումներ են կատարվել թվով 5 մեքենաների վրա, փոխարինվել են կարդանի խաչուկները, ատամնանիվները, առանցքակալները, կիսասռնիները, խտաբուկները, մանեկները, սատելիտները:

Փոխարինվել են թվով 71 մեքենա-մեխանիզմների շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղերն ու գտիչները:

Գեներատորի նորոգում է իրականացվել թվով 5 մեքենաների վրա, փոխարինվել են ածուխները, դիոդային կամրջակները, առանցքակալները և տուլկիները:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, ինչը նպաստում է համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները ժամանակին վերացնելուն :

2. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Բաժանորդների տվյալներ

ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 30.11.2016թ. թիվ 379-Ն որոշմամբ սահմանված կարգով շարունակվում է ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքման գործընթացը: 01.10.2017թ. դրությամբ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել Երևանի տարածաշրջանից 80.250, իսկ Մարզերում 96.092 նոր պայմանագիր:

Սակայն կան նաև պայմանագրերի կնքման գործընթացը խոչընդոտող հանգամանքներ. բաժանորդների բնակարանների մշտապես կամ ժամանակավոր փակ լինելը, սեփականատիրոջ բացակայությունը հանրապետությունից, սեփականության (վարձակալության) իրավունքի փաստաթղթերի թերի լինելը, կամ անձը հաստատող փաստաթղթի՝ անձնագրի, վավերականության ժամկետի լրացած լինելը և այլն:



Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները սեպտեմբեր ամսվա դրությամբ բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Գոյություն ունեցող բաժանորդների ընդհանուր քանակը	Ծախսող բաժանորդների քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	333.772	260.280	78.0
2		Իրավաբանական անձ	17.075	12.467	73.0
1	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	383.981	217.080	56.5
2		Իրավաբանական անձ	16.027	8.806	54.9

2.2. Հասույթ

Բաժանորդներին մատակարարված խմելու ջրի ծավալների ճշգրիտ և ամբողջական հաշվառման նպատակով, պարբերաբար կատարվում են բաժանորդների ծախսերի վերլուծություններ, համեմատվում են ինչպես նախորդ ամիսներին, այնպես էլ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում սպառված ջրաքանակների հետ, անհրաժեշտության դեպքում՝ նաև տեղերում կատարվում են ընտրանքային ստուգումներ:

Ստորև, գրաֆիկային տեսքով, բերված է 2017թ. բաժանորդների ամսական սպառման ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.



Ստորև, աղյուսակի տեսքով, բերված է 2017թ. սեպտեմբեր ամսին Ընկերության Առևտրային տնօրինությունների հասույթի առաջադրանքների կատարողականության ցուցանիշները.

Տարածաշրջան	Ամիս	Առաջադրանք	Փաստացի	Տարբերություն
		հազ.ՎՅ	հազ.ՎՅ	%, հազ.ՎՅ
Երևան	Սեպտեմբեր	7009.3	7.014	0.07
Մարզեր		4.511	4.501	-0.22

Պարբերաբար իրականացվում են «գրոյական» ջրածախսերի վերլուծություններ, որոնց արդյունքներով վերահսկողական խմբերի կողմից տեղերում կատարվում են լրացուցիչ

ստուգումներ: Ստուգումների ընթացքում հայտնաբերված՝ ջրաչափերով չհաշվառված, բաժանորդների տվյալների բազա չմուտքագրված ծախսերն անմիջապես մուտքագրվում են բաժանորդների հաշվառման քարտերին:

Առևտրային տնօրինության վերահսկողական խմբերի կողմից հայտնաբերված կասկածելի և խափանված ջրաչափերի ցուցակները ներկայացվում են Տեխնիկական տնօրինությանը՝ նորերով փոխարինելու նպատակով: Թվով 1221 փոխարինված ջրաչափեր ներկայացվել են ջրաչափի զննման և նախնական փորձաքննության: Համաձայն նշված փորձաքննության արձանագրությունների բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել 217166.85 մ³ վերահաշվակված հասույթ:

Ստորև բերված աղյուսակում արտացոլված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական սպառման ծավալների վերաբերյալ տվյալները.

Տարեթիվ	Երևան	Մարզեր
	Մեկտեմեր	
2016թ.	15.2	10.9
2017թ.	16.1	14.6
Տարբերությունը	0.9	3.7

Ճշտվում և բաժանորդների տվյալների բազայում լրացվում են չլրացված (թերի լրացված) տվյալները, մասնավորապես՝ «չբաշխված» տարածքներն ամրակցվում են սպասարկող աշխատակիցներին ու տեղամասերին, ինչի արդյունքում հստակեցվում է սպասարկող աշխատակիցների պարտավորությունները, բարձրանում պատասխանատվությունն ու ծախսերի վերահսկելիությունը:

2.3. Գանձում

Ընկերության ձևավորված հասույթի դիմաց գանձման առաջադրանքի կատարման տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.





Տարածա- շրջան	Գանձում	02.2017	03.2017	04.2017	05.2017	06.2017	07.2017	08.2017	09.2017	Ընդ- մենը
Երևան	Առաջադրանք	1.024.561	1.006.737	971.133	964.825	1,057,245	1,057.014	1.135.462	1.229.948	8.446.925
	Հավաքագրում	692.209	1.143.800	887.210	978.278	1,001,569	1.051.079	1.100.613	1.206.694	8.061.452
	%	67.56	113.61	91.36	101.39	94.73	99.44	96.93	98.11	95.44
Մարզեր	Առաջադրանք	582.951	608.945	594.916	560.140	657.432	659.344	650.441	688.251	5.002.420
	Հավաքագրում	101.954	592.521	468.175	547.640	561.150	608.411	621.344	634.933	4.136.128
	%	17.49	97.30	78.70	97.77	85.35	92.28	95.53	92.25	82.68

2.4 Ջրաչափեր

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ բաժանորդների տվյալների բազայում 01.10.2017թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում՝ ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում՝ ծախսող	%
Երևան	Ջրաչափով	328.398	258.759	78.79	16.411	12.454	75.89
	Առանց ջրաչափի	5.374	1.521	28.30	664	13	1.96
Մարզեր	Ջրաչափով	334.924	208.871	62.36	14.396	8.785	61.02
	Առանց ջրաչափի	49.057	8.209	16.73	1.631	21	1.29

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում փոխարինվել է շուրջ 4.214, իսկ Մարզերում 2.429 հատ ջրաչափական սարք: Փոխարինված ջրաչափերով ծախսերի վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված գործընթացը բավականին արդյունավետ է: Ակնհայտ է, որ նախկին՝ ժամկետանց ջրաչափերը թերգրանցում էին բաժանորդների կողմից օգտագործված ջրաքանակները:



«Վեոլիա Ջուր» ՓԲԸ բաժանորդների տվյալների բազայում 01.10.2017թ. դրությամբ հաշվառված պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%
Երևան	443.997	277.141	62.4	19.066	3.122	16.37
Մարզեր	392.897	83.367	21.2 2	16.566	1.716	10.36

Պիլոտային ծրագրի շրջանակներում, ս.թ. սեպտեմբերի 1-ից Շահումյան վարչական շրջանում իրականացվել են առկա ջրաչափերը նորերով փոխարինման լայնածավալ աշխատանքներ :

Կատարված աշխատանքների հակիրճ նկարագիր

Փողոց	Ջրաչափերի ընդհանուր քանակը	Փոխարինված ջրաչափերի քանակը	%
ՇԵՐԱՍԻ 101	83	48	57.8
ՇԵՐԱՍԻ 103	109	72	66.1
ՇԵՐԱՍԻ 105	204	123	60.3
ՇԵՐԱՍԻ 107	163	131	80.4
ՇԵՐԱՍԻ 109	112	54	48.2
ՇԵՐԱՍԻ 111	105	63	60.0
ՇԵՐԱՍԻ 113	186	134	72.0
ՇԵՐԱՍԻ 115	201	107	53.2
ՇԵՐԱՍԻ 71	156	68	43.6
ՇԵՐԱՍԻ 77	104	59	56.7
ՇԵՐԱՍԻ 79	176	100	56.8
ՇԵՐԱՍԻ 81	88	34	38.6
ՇԵՐԱՍԻ 83	70	42	60.0
ՇԵՐԱՍԻ 85	73	45	61.6
ՇԵՐԱՍԻ 87	199	112	56.3
ՇԵՐԱՍԻ 89	146	117	80.1
ՇԵՐԱՍԻ 93	105	62	59.0
ՇԵՐԱՍԻ 95	72	51	70.8
ՇԵՐԱՍԻ 97	72	44	61.1
ՇԵՐԱՍԻ 99	178	122	68.5
ՍՎԱՃՅԱՆԻ 56	106	61	57.5
ՍՎԱՃՅԱՆԻ 58	76	46	60.5
ՍՎԱՃՅԱՆԻ 60	71	50	70.4
ՍՎԱՃՅԱՆԻ 60/1	87	54	62.1
ՍՎԱՃՅԱՆԻ 62	121	90	74.4
Ընդամենը	3063	1889	61.7

2.5 Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում



Շարունակական աշխատանք է տարվում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար
Երևան	100	58.499	10.211.691
Մարզեր	180	96.032	15.629.708




3. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

3.1. Ջրամատակարարման շարունակականություն



Հաշվետու ամսին Երևան քաղաքի ջրամատակարարման շարունակականության տվյալները կազմել են 97.3%, ինչը 0.7%-ով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:



Ջրամատակարարման շարունակականությունը (Երևան)



Թվով 66 ճնշման կարգավորիչ փականների աշխատանքային վիճակը որոշելու համար կատարվել են ստուգումներ, որոնց արդյունքում պարզվել է, որ նշված ՃԿՓ-ներից 18-ը անսարք են: Դրանք տեղափոխվել են համապատասխան ստորաբաժանում՝ անսարքությունները վերացնելու նպատակով:

Ստորև նեկայացված են կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ճնշման լոգերների որոշ գրաֆիկները՝ աշխատանքներից առաջ և հետո:






- Հաշվետու ամսվա ընթացքում խողովակաշարի ներքին ուսումնասիրման տեսախցիկով հետազոտվել է Նոր Նորք վարչական շրջանի Լվովյան փողոցի L=13մ երկարությամբ խողովակաշար, որտեղ առկա էր խմելու ջրի արտահոսք ($Q=2$ լ/վ): Հայտնաբերված խնդիրը օպերատիվ կերպով վերացվել է:
- Ազատամարտիկների փողոցի վրա գտվող կոյուղատարի ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ դիտահորից 6մ հեռավորության վրա խողովակը վնասված է, ինչի հետևանքով խմելու ջուրը ($Q=2$ լ/վ) լցվում է կոյուղատարի մեջ: Հայտնաբերված խնդրի մասին իրազեկվել է «Էրեբունի» տեղամասի համապատասխան պատասխանատուներին՝ խնդիրը վերացնելու նպատակով:
- Ուսումնասիրվել է «Բազմաղբյուր» ջրաղբյուրների N1 կապտաժը: Արդյունքում պարզվել է, որ կապտաժից սկիզբ առնող խողովակի L=11մ հատվածը փայտից է, որը ենթակա է փոխարինման: Այդ մասին տեղեկացվել է համապատասխան ստորաբաժանումը՝ շինարարական աշխատանքներ իրականացնելու նպատակով:

3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում

Հաշվետու ամսվա ընթացքում օպերատիվ կերպով կարգավորվել են պոմպակայաններում առաջացած թվով 31 էլ.մատակարարման խափանումները: Ուսումնասիրվել են թվով 179 հասցեներ, հայտնաբերվել և վերացվել են թերություններ թվով 11 պոմպակայաններում:

Էլ.համակարգի ուսումնասիրության արդյունքում 6 հասցեներում հայտնաբերվել է նաև 5972կՎտ հավելագրում, ինչի մասին տեղեկացվել է «ՀԷՑ» ՓԲԸ-ի համապատասխան պատասխանատուներին՝ ուղղում կատարելու նպատակով:


h/h	Հասցե	Կատարված աշխատանք	Ամսեկան Կվտ/ժ
1	Գ.Նժդեհի 16	ռելեի կարգաբերում	1584
2	Բ1 թաղ,97	ռելեի կարգաբերում	
3	Չեխով 56	լարանցում, հետագիծը հնարավոր չէր պարզել	576
4	Նորապատ պ/կ	հաշվիչի սխալանք,թերությունը վերացված է	1500
5	Արարատյան պ/կ	հաշվիչի սխալանք,թերությունը վերացված է	7000
6	Ազատամարտիկների 76	Հավելագրում	5972
7	Բագրատունյաց 22/3	Հավելագրում	
8	Բագրատունյաց 16	Հավելագրում	
9	Արշակունյաց 50	Հավելագրում	
10	Արշակունյաց 52/1	Հավելագրում	
11	Եղվարդի պոմպ	Հավելագրում	



Հաշվետու ամսում Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ.էներգիայի ծախսը ավելացել է ամսական 649.762կՎտ/ժ (65.90%), անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ :

Երևան քաղաքի պոմպակայանների սպառած էլ.էներգիան


կՎտ



Ընկերության ընդհանուր էլ.էներգիայի ծախսը ավելացել է է ամսական 945.918կՎտ/ժամով (20.21%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոլիա Ջուր» ՓԲ Ընկերության կողմից սպառած էլ.էներգիան

կՎտ



➤ **Գոմաձոր**

Սևան քաղաքի «Գոմաձոր» պոմպակայանում, որը սնվում է «ԼՃաշեն» խորքային հորերից, կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել էր, որ պոմպակայանում հոսանքի ծախսը հնարավոր է նվազեցնել մի քանի անգամ:



Իրականացված աշխատանքների արդյունքում տեղադրվել է «INVARTOR» համակարգ և բացվել են պոմպից հետո առկա կիսաբաց փականները: Արդյունքում տնտեսվել է 23կՎտ/ժամ էլեկտրաէներգիա (58%), հաշվի առնելով, որ նախկինում պոմպը աշխատում էր 40Վտ/ժամ հզորությամբ:


➤ **Կոզդաշեն**

«Կոզդաշեն» պոմպակայանում կատարվել են ջրաքանակների և ճնշումների չափման աշխատանքներ՝ ջրատար համակարգի բարելավման և էլեկտրաէներգիայի ծախսի նվազեցման նպատակով:



Արմավիրի մարզի Շենիկ և Արգինա գյուղական համայնքները սնող «Կոզդաշեն» պոմպակայանից սկիզբ առնող ջրատարում ճնշումը կազմում էր $P=38.5$ մ, իսկ ջրաքանակը՝ $Q=18.5$ լ/վ: Աշխատանքների արդյունքում պոմպակայանում տեղադրվել է «Grundfos SP 60-16» պոմպ, ինչը բերել է 14կՎտ/ժամ (32%) էլ. էներգիայի տնտեսման, հաշվի առնելով, որ նախկինում պոմպը աշխատում էր 44կՎտ/ժամ հզորությամբ :


«Կոզդաշեն» պոմպակայան



➤ **Արզնի-1**

Սանիտարական գոտում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ «Արզնի-1» ջրատարը սնող N4 կապտածի դրենաժային խողովակը խցափակված էր ծառի արմատներով, ինչի հետևանքով դրենաժի ջրաքանակը 25լ/վ-ով պակաս էր: Դրենաժային խողովակների մաքրման աշխատանքներից հետո ջրաքանակը ուղղակիորեն գետը թափվելու փոխարեն ուղղվեց դեպի «Արզնի-1» ջրատար:

Արզնի-1 պոմպակայան



➤ **Արզնի -2**

Ջրի որակի ուսումնասիրությունների ընթացքում պարզվել էր, որ «Արզնի-2» ջրատարում քլորի չափաբաժինը քիչ է: Իրականացված աշխատանքները թույլ են տվել սանիտարական գոտում գտնվող վթարային վիճակում գտնվող ջրատարին միացված քլորացման D=50մ ջրագիծը փոխարինել նորով:

3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ

- Ջրագրկման ենթակա տարածքների բաժանորդների առանձնացում և արտածում US համակարգից՝ բաժանորդների տվյալների բազային կցելու նպատակով:
- «Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում՝ տեղամասերի մասնագետ-տեսուչների հետ համատեղ: Հավաքագրված տեղեկատվության ներմուծում ԱՏՀ և փոխանցում Առևտրային տնօրինությանը՝ բաժանորդների տվյալների բազան թարմացնելու նպատակով:
- Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի վթարների հաճախականության վերլուծական քարտեզների կազմում:
- “Շերամ” ջրամատակարարման գոտու քարտեզի թարմացում և հասցեների տեղադրում:

- Նոր Նորք 5-րդ զանգվածի ջրամատակարարման գոտու քարտեզի կազմում, համապատասխան իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների տվյալների տեղադրում քարտեզի վրա և տվյալների արտածում «Ինտերակտիվ» համակարգից՝ հասույթի հաշվարկման և այլ պահանջվող տվյալների ստացման համար:
- «Մալաթիա-Սեբաստի» վարչական շրջանի հատվածի ջրամատակարարման գոտիների քարտեզի կազմում:
- «Արևմուտք» ՏՏ սպասարկման տարածքի բնակավայրերի քարտեզի կազմում և տպագրում:
- Շահագործման տեղամասերից ստացված տեղեկատվության հիման վրա ԱՏՀ քարտեզ մուտքագրում նոր կառուցված՝ L=3780մ, շահագործումից հանված՝ L=1060մ ջրագծերի և շուրջ 59 փականների, ինչպես նաև L=253մ կառուցված և ավելի քան L=457մ շահագործումից հանված կոյուղագծերի վերաբերյալ տվյալներ:
- Թվով 25 բնակավայրերի (քաղաքներ և գյուղեր) կադաստրային քարտեզների «AutoCAD» ծրագրից դեպի «ArcGIS» վերափոխման գործընթացի շարունակություն, ինչպես նաև յուրաքանչյուր բնակավայրի համար տվյալների մշակվում՝ ճանապարհներ, շենք-շինություններ և ջրագծեր:
- «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող բնակավայրերի (շինությունների, ճանապարհների և ջրագծերի) էլեկտրոնային քարտեզների ամբողջական միավորում մեկ ֆայլում (289 գյուղ և 40 քաղաք):
- Երևան քաղաքի ջրամատակարարման ներքին ցանցի համակարգում արձանագրված վթարների, թեմատիկ քարտեզների և տվյալների բազայի ստեղծում:
- «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի նախկին սպասարման տարածքների բնակավայրերի էլեկտրոնային քարտեզների շերտերի հետ կապված, ինչպես նաև նկարագրական ինֆորմացիայի ջրագծերի հետ կապման աշխատանքների ավարտ:
- «Արևելք» և «Արևմուտք» տարածաշրջանների տնօրինությունների սպասարկման տարածքների քարտեզի ստեղծում:
- «Վեոլիա Ջուր» ՓԲ Ընկերության կողմից սպասարկվող մի շարք բնակավայրերի 2016թ և 2017թ-ի ջրամատակարարման և էլեկտրաէներգիայի ծախսերի թեմատիկ քարտեզների կազմում և բազայի ստեղծում:

- Շահագործման տեղամասերի ինժեներների կողմից ներկայացված ջրամատակարարման և ջրահեռացման ցանցում իրականացված աշխատանքների համակարգում, համապատասխան գծագրերի կազմում և մուտքագրում ԱՏ համակարգ:
- Թվով 4 «Ա3» ֆորմատի կատարողական քարտեզների կազմում Արտադրատեխնիկական բաժնի աշխատանքների համար:
- Երևան քաղաքի ջրահեռացման ցանցի տվյալների ճշտման համար թվով 9 «Ա1» ֆորմատի քարտեզների կազմում և տպագրում: Սևան, Խորոնք, Նորատուս, Ծաղկաձոր և Աշտարակ քաղաքների քարտեզների տպագրում «Ա0» ֆորմատով:

3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ

Հաշվետու ամսվա ընթացքում «SCADA» համակարգերի միջոցով առցանց կառավարվել են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում առկա պոմպային ագրեգատների անխափան աշխատանքը, ջրամբարների լցվածության մակարդակը, ճնշումային լոգերները, ջրաչափական սարքերի աշխատանքը և բաշխիչ ցանցում առկա մնացորդային քլորի համապատասխանելիությունը սահմանված չափաբաժնին:

Ստորև ներկայացված է հայտնաբերված խնդիրներից կարևորագույնները.

- Տիչինա փողոցում հայտնաբերվել էր վթար՝ $Q=80$ լ/վ ջրաքանակով: Հոսքաչափի տվյալներից պարզվել էր, որ ջրաքանակը ավելացել էր 80լ/վ-ով, հասնելով 120լ/վ-ի, այն դեպքում, որ սովորաբար Տիչինա փողոցում ջրի սպառումը ժամը 02:00-ից մինչև 05:00 կազմում է 40լ/վ: Իրականացված որոշ աշխատանքների արդյունքում հայտնաբերվել էր ջրատարի վթար՝ $D=300$ մմ-ից դեպի $D=500$ մմ անցնող ջրատարի ճկուն միացման հատվածում: Հայտարարված վթարային ջրանջատման ընթացքում վթարը վերացվել էր «Շահումյան» տեղամասի աշխատակիցների կողմից:
- Նոր Նորքի 9-րդ գանգվածում հայտնաբերվել էր վթար՝ $Q=15$ լ/վ ջրաքանակով: Հոսքաչափի տվյալները ցույց են տվել, որ ջրասպառումը 1 վայրկյանում հասնում է մինչև 65լ/վ, այն դեպքում, որ սպառումը սովորաբար այդ ժամերին կազմում է 50լ/վ: Աշխատանքների արդյունքում պարզվել էր, որ վնասվել էր Վիլնյուսի 24 շենքի ջրատար խողովակի $D=50$ մմ փականը: Հայտարարվել էր վթարային ջրանջատում, որի ժամանակ «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների կողմից փականը փոխարինվել էր:

4. ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ ՍԵՐՎԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

4.1. Համակարգչային ցանց

Սեպտեմբեր ամսվա ընթացքում կատարվել են հետևյալ համակարգչային և ցանցային աշխատանքներ.

- «Արևելք» և «Արևմուտք» Տարածաշրջանների տնօրինությունների «Աշտարակ», «Հրազդան» և «Իջևան» տեղամասերում մոնտաժվել են նոր համակարգչային ցանցեր, կարգաբերվել են համակարգիչները և միացվել են «Վեոլիա Ջուր» Ընկերության ցանցային միջավայրին:
- «Վայք» տեղամասում մոնտաժվել են ներքին հեռախոսային և տեսահսկման համակարգի ցանցեր:
- Պրոֆիլակտիկ և արագ արձագանքման այցեր են իրականացվել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ՀՀ տարածքում գտնվող գրեթե բոլոր հասցեներ: Կատարվել է համակարգչային, տպող-պատճենահանող, ցանցային տեխնիկայի զննում և վերանորոգում, տրամադրվել է ծրագրային ապահովման աջակցություն:

4.2. Ինտերակտիվ համակարգ

Սեպտեմբեր ամսին ծրագրային ապահովման խմբի կողմից մշակվել և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին են տրամադրվել մի շարք հաշվետվություններ՝ «Վեոլիա Ջուր» Ընկերությունում անցկացվող սակագնի հայտի վերաբերյալ մոնիտորինգի համար:

«Ինտերակտիվ» համակարգում կատարվել են մի շարք ծրագրային ուղղումներ, թարմացումներ և ընթացիկ աշխատանքներ:

Ջրաչափերի կարգաբերման և ստուգաչափման լաբորատորիայի կողմից կատարված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափումների և հետազոտությունների արդյունքում խախտումների հայտնաբերման համար նախատեսված մշակված ծրագրային ապահովման մեջ ավելացվել է բաժանորդներին ծանուցման ավտոմատ գեներացման հնարավորություն: Դրա շնորհիվ հնարավոր է առցանց ստանալ արձանագրության, հաշվարկի և ծանուցման օրինակները և, կատարելով ՀԿԾՀ N378-Ն որոշման պահանջը, 10 աշխատանքային օրվա ընթացքում բաժանորդին ծանուցել վերահաշվարկված գումարի մասին :

4.3. Բջջային օպերատորներ և ինտերնետ

Հաշվետու ամսվա ընթացքում կատարվել է «Վիվասել-USU» և «Յուքոմ» օպերատորների կողմից տրամադրվող բջջային կապի սահմանաչափերի օպտիմալ վերաբաշխումը «Վեոլիա Ջուր» ՓԲԸ աշխատակիցներին: Արմավիր և Իջևան քաղաքներում կատարվել են «Վեոլիա Ջուր» ընկերության որոշ ստորաբաժանումների տեղափոխություններ, ինչի հետ կապված իրականացնվել են նոր ցանցային միջավայրի մոնտաժման և միացման աշխատանքներ (օպերատոր՝ «Ռոստելեկոմ»):

5. ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Մեպտեմբեր ամիսը Հանրային կապերի ծառայության համար իրադարձությունների առումով կայուն ու կանխատեսելի ամիս էր, որի շնորհիվ հնարավոր եղավ ավելի շատ ուշադրություն դարձնել Ընկերության տարբեր ծառայություններից ստացվող տեղեկատվությանը և «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի ու զանգվածային



լրատվամիջոցների /առաջին հերթին՝ էլեկտրոնային կայքերի/ միջոցով դրա տարածմանը հանրության շրջանում:

Գրեթե ամեն օր հրապարակվել է «Վեոլիա Ջուր» Ընկերության աշխատանքների վերաբերյալ հաղորդագրություններ, հիմնականում տրամադրված «Արևմուտք» և

«Արևելք» տարածաշրջանների տնօրինությունների կողմից: Հրագրան, Դիլիջան, Ճամբարակ, Վեդի, Գյումրի, Իջևան, Գավառ՝ առաջին հերթին խոսքը մարզերում տարվող աշխատանքների լուսաբանման մասին է:

Հասարակական հնչեղության առումով հաշվետու ամսին կարևոր միջոցառում է եղել «Մաքուր Սևան - 2017» ծրագրի արդյունքների ամփոփումը: Իսկ հաշվի



առնելով մասնակիցների լայն շրջանակը, այն նաև որոշակիորեն պաշտոնական բնույթ է կրել: «Մաքուր Սևան» ծրագիրը, որի ֆինանսավորն էր Վեոլիա Հիմնադրամը,



իրականացվել է «Ֆրանս-հայկական» զարգացման հիմնադրամի կողմից «Սևան ազգային պարկի» հետ համատեղ: Իսկ վերահսկել է այն «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությունը: Ծրագրի ամփոփումն էլ կատարվեց Ջրտնտեսկոմիտեի նախագահ՝ Արսեն Հարությունյանի ու ՀՀ

Բնապահպանության նախարարության ներկայացուցչի մասնակցությամբ:



Միջոցառման համար Հանրային կապերի ծառայությունը պատրաստել էր 5.5 րոպե տևողությամբ տեսաֆիլմ՝ «ՎԵՈԼԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ԿԱՊՈՒՏԱԿ ՍԵՎԱՆԻՆ» անվանմամբ, ինչպես նաև 3 ցուցատախտակ, այդ թվում 1-ը նվիրված հատուկ Սևանին, իսկ ծրագրի

արդյունքները հրապարակել է լրատվամիջոցներում:

Ընկերության ֆեյսբուքյան պաշտոնական էջում և yerevanjur.am կայքում շարունակվում են լուսաբանվել պաշտոնական տոներն ու իրադարձությունները: Մասնավորապես խոսքը Ֆրանսիական «Veolia Group» ընկերության համակարգում իրականացված հերթական տարեկան «Առողջության և անվտանգության» միջազգային շաբաթի մասին է, որին մասնակցել է նաև վերջինիս մաս կազմող «Վեոլիա Ջուր» Ընկերությունը, Ֆրանսիայից ժամանած հյուրերի մասնակցությամբ:

Վերջին կարևոր միջոցառումը համակարգում ապօրինի ջրօգտագործման դեմ տարվող պայքարի լուսաբանումն էր, որի սկիզբը դրվել էր օգոստոսին:



Դրա շրջանակներում լրատվամիջոցներում, առաջին հերթին թերթերում, 2 անգամ հրապարակվել է մամուլի հաղորդագրություն «Ո՛Չ ԱՊՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԱՅՈ՛ՐՈՐԻՆԱԿԱՆ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ» ծրագրի ընթացքի ու արդյունքների մասին: Սակայն առավել մեծ հնչեղություն է ստացել «Կենտրոն» հեռուստաալիքով եթեր հեռարձակված «Հայկական ուրբաթ» հաղորդաշարի հերթական թողարկումը՝ «Ինչպես կառուցել ջրագիծ» թեմայով, ընկերության պատասխանատուների մասնակցությամբ: